

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2023-2024 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
9 – րդ դասարան

- 1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՛ սխալ** 2 միավոր
- ա. Փոքր Կովկասի համակարգի ամենաբարձր գագաթը Էլբրուսն է
բ. Արևելապոնտական լեռների բարձր գագաթը Քաջքարն է
գ. Հայկական լեռնաշխարհում Սիփանից հետո ամենաբարձր գագաթը Ջիլոն է
դ. Եղնախաղի լեռնավահանի ամենաբարձր գագաթը ցածր է Ջավախքի լեռնավահանի ամենաբարձր գագաթից
ե. Հարավարևելյան Ասիայի քրիստոնյա ժողովուրդներից են ֆիլիպինցիները
զ. Հարավարևելյան Ասիայում ներքամաքային դիրք ունեցող միակ երկիրը Կամբոջան է
է. Հարավարևելյան Ասիայում է անագի գոտին
ը. Հարավ-Արևելյան Ասիայում են «Ասիական 4 վագրերից» երկուսը

- 2. Նշվածներից ո՞ր եզրույթը չի վերաբերում Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆին** 1 միավոր

ա. միստրալ բ. գայոտ գ. փողրակ դ. շելֆ

- 3. Նկարագրով որոշել պետությունը** 1 միավոր
- Այս Եվրոպական հանրապետությունը Եվրոպական միության անդամ չէ, սակայն ազգաբնակչության մեջ շատ են Եվրամիության անձնագրով քաղաքացիները: Բնակչության մեծ մասի լեզուն պատկանում է ռոմանական լեզվախմբին, իսկ կրոնով՝ ուղղափառ քրիստոնյաներ են:

- 4. Ելնելով քամու ուղղության տվյալներից՝ գծեք լեռան լանջին գտնվող բնակավայրի քամիների վարդը (1 միավոր) և պատասխանեք հարցերին (յուր.՝ 1 միավոր)**

Կրկնելիությունը ըստ հորիզոնի կողմերի (%)							
Հս.	Հս.արլ.	Արլ.	Հվ.արլ.	Հվ.	Հվ.արմ.	Արմ.	Հս.արմ.
5	1	1	2	50	36	3	2

- ա. Հորիզոնի ո՞ր ուղղությանը նայող լանջին է գտնվում տվյալ բնակավայրը 1 միավոր
բ. Տարվա ընթացքում քանի՞ օր է քամին փչում հարավից, եթե անհողմ օրերի թիվը 85 է 1 միավոր

5. Խնդիրներ

- ա. Գետի հունը բնական վիճակում ուներ 30մ լայնություն, իսկ ջրի շերտը՝ 0.5մ միջին խորություն: Նման վիճակում ծախսը 12 մ³/վրկ էր: Որքա՞ն էր հոսքի արագությունը և որքա՞ն կդառնա գետի ծախսը այդ հատվածում, եթե հոսքի արագությունը մնա նույնը, սակայն հունի լայնությունը ընդարձակվի և դառնա 40մ, իսկ ջրի շերտի միջին խորությունը դառնա 1մ: 1 միավոր
- բ. Ա երկրի բնակչության թիվը 10մլն մարդ էր, որից քաղաքաբնակ էր 7մլն մարդ: 10 տարվա ընթացքում երկրի բնակչության բացարձակ հավելվածը կազմել է 0.5մլն մարդ, իսկ ուրբանիզացման մակարդակը հասել է 80%: Որքա՞ն է կազմել գյուղական բնակչության թվի բացարձակ անկումը այդ նույն ժամանակահատվածում: 1 միավոր

6. Թվարկել.

Հարավային կիսագնդի օվկիանոսային տաք հոսանքներից չորսը 1 միավոր

7. Դասավորել

- ա. նշված լճերն ըստ աղիության ցուցանիշի աճող հաջորդականության. Տիտիկակա, Արալյան, Պոռայո, Բոդեն 1 միավոր
- բ. նշված պետություններն ըստ ծովային սահմանների երկարության աճող հաջորդականության. Կանադա, Չինաստան, ՌԻ, Հնդկաստան 1 միավոր

- 8. Բացատրել՝ հարցադրումներից յուրաքանչյուրի համար ներկայացնելով մեկ հիմնավոր պատճառ**

ա. ՀՀ տարածքի հյուսիս-արևելքում, հարավ-արևելքի համեմատ, անտառները տարածվում են ավելի ցածր նիշերում: Ինչու՞ 1 միավոր

բ. Ֆանդի ծոց թափվող գետերի ջուրը պարբերաբար հոսում է հակառակ ուղղությամբ: Ինչու՞ 1 միավոր

9. Դիտարկեք տվյալների շարքը և պատասխանեք հարցերին

Էլեկտրական ավտոմեքենաների համաշխարհային վաճառքները (մլն ավտոմեքենա)

Տարի	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Մեքենա	0.54	0.84	1.2	2	2.3	3.3	6.5	10.5	12.3

ա. Ո՞ր տարեթիվին է նախորդ տարեթվի համեմատ գրանցվել վաճառքների ամենաբարձր հարաբերական աճը և քանի տոկոս է այն կազմել 0.5 միավոր

բ. Ո՞ր երկրում են ամենաշատ վաճառքները վերջին երկու տարիներին 0.5 միավոր






գ. Ներկայացնել էլեկտրական ավտոմեքենաների երկու առավելություն 1 միավոր

10. Պատասխանեք ստորև բերված հարցադրումներին և հիմնավորեք

ա. Երկրակեղևի ինչպիսի՞ ուղղահայաց շարժում է բնորոշ Սկանդինավյան թերակղզուն վերջին մոտ 10 հզ տարիների ընթացքում և ինչու՞ 1 միավոր

բ. Ո՞րն է Եթովպիայի գյուղատնտեսության առաջատար ճյուղը և ինչու՞ 1 միավոր

11. Գետերի ծախսի տրամագրերը համապատասխանեցնել քարտեզում նշված համարներին (օր. Ա-5) 2 միավոր



Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան